1031 Հիսուսի սերը հպվել է ինձ,

1. Հիսուսի սերը հպվել է ինձ,
Պոկել, կտրել է այս աշխարհից:
Ցնծում եմ ես, Տե՛ր, Քեզանով՝
Իմ պաշտելի, իմ փառավոր

Ամ որքան եմ սիրում Քեզ, իմ Հիսուս,
Իմ Արարիչ, իմ կյանքի լույս.
Ուզում եմ խոնարհվել,
Փառաբանել, մեծարել:

2. Հոգնել եմ այս մեղքի կյանքից,
Տկար մարմնից ու ամենից:
Միակը, Ով բուժել է ինձ՝
Ինձ վեր կառնի այս աշխարհից:

3. Գալիս եմ Քեզ հոժարությամբ,
Գիտեմ, կնդունես ուրախությամբ.
Թողություն տվեցիր մեղքերիս՝
Խաչի մահով և հարությամբ

Ամ որքան ես սիրում Դու ինձ, Հիսուս,
Իմ Արարիչ, իմ կյանքի լույս.
Ուզում եմ խոնարհվել,
Փառաբանել, մեծարել: